

## Համաձայնագիր

Արագածոտն մարզի Աշտարակ քաղաքի և Լենինգրադի մարզի  
Կիրովսկի ինքնավար շրջանի «Կիրովսկ» քաղաքային միավորման միջև  
համագործակցության և զարգացման մասին

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ քաղաքը, ի դեմս գործող քաղաքապետ Արսեն Վաչեի Անտոնյանի՝ մի կողմից, և Ռուսաստանի Դաշնության Լենինգրադի մարզի Կիրովսկի ինքնավար շրջանի «Կիրովսկ» քաղաքային միավորումը, ի դեմս գործող ղեկավար Վադիմ Վալենտինի Նեկրասովի՝ մյուս կողմից, հիմք ընդունելով Լենինգրադի մարզի կառավարության և Արագածոտնի մարզպետարանի միջև կնքված համաձայնագրի 10-րդ հոդվածի պահանջները, ելնելով փոխադարձ շահերից, Աշտարակ և Կիրովսկ քաղաքների հետագա խնդիրների արդյունավետ լուծման համար հնարավոր գործնական կապերի ավելի լայն օգտագործումից, նախատեսված Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրություններով, որոնցով առաջնորդվում են տեղական ինքնակառավարման մարմինները, առաջնորդվելով Աշտարակ և Կիրովսկ քաղաքների բնակչության միջև ընկերության և փոխհամաձայնության ամրապնդման միտումից, ինչպես նաև երկկողմ կապերի հաստատուն և երկարատև զարգացումից, հոգալով երկու քաղաքների բնակչության կարիքները՝ համաձայնեցին հետևյալի մասին.

### 1. Համաձայնության առարկան

1.1. Սույն Համաձայնագրի առարկան հանդիսանում է իրավասու մարմինների պաշտոնատար անձանց համագործակցությունը կազմակերպելու այն գործառույթների կատարման արդյունավետ աշխատանքը, որոնք դրված են կողմերի տեղական ինքնակառավարման մարմինների վրա՝ գործող օրենսդրությամբ:

### 2. Հատուկ պայմանները

2.1. Սույն Համաձայնագիրը հիմք է հանդիսանում կողմերի միջև համաձայնագրեր և պայմանագրեր կնքելու, ներդրումային ծրագրերի իրականացման, ինչպես նաև մշակութային և զինուկան ոլորտներում համագործակցության համար: Սույն Համաձայնագիրը չի ազդում Կողմերի իրավունքների և պարտականությունների վրա, որոնք նախատեսված են այլ պայմանագրերով:

### 3. Համագործակցության ձևերը

Կողմերի իրավասու անձինք և իրավասու մարմինները սույն պայմանագրի շրջանակներում իրականացնում են համագործակցության հետևյալ ձևերը.


3.1. Կողմերը համաձայն են ստեղծել գործնական հարաբերություններ տեղական իշխանությունների աշխատանքի իրավասության առումով, ինչպես սահմանված է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Սահմանադրություններով:


3.2. Կողմերը համաձայն են, որ սույն համաձայնագրի նպատակը հիմնված է փորձի փոխանակման, Աշտարակի և Կիրովսկի գործնական և տնտեսական կապերի ամրապնդման վրա: Աշտարակի և Կիրովսկի քաղաքապետարանների փորձի փոխանակումը, հնարավորությունների ցուցադրումը պետք է իրականացվի հետևյալ բնագավառներում:

- Տեղական տնտեսական զարգացում, զբոսաշրջության զարգացում, արտահանման և ներմուծման հարաբերություններ
  - Տեղական սոցիալական զարգացում, առողջապահական և բժշկական ծառայություններ, կրթական ծրագրեր, մշակույթ և սպորտ, ինչպես նաև ցանկացած այլ ոլորտներ, որոնք ելնում են երկու կողմերի շահերից:
- 3.3. Ելնելով միմյանց շահերից՝ Կողմերը համաձայն են, որ առանց նախնական համաձայնության իրենք չեն կրելու ֆինանսական կորուստներ միջոցառումների անցկացման ժամանակ:
- 3.4. Կողմերը պարտավորվում են նպաստել երկկողմ հարաբերությունների զարգացմանը տեղական ինքնակառավարման սոցիալ-տնտեսական ոլորտում, որտեղ տեղական իշխանությունները վճարող դեր ունեն և պետք է հանդիսանան որպես նախաձեռնող կողմ՝ նպաստելով բարեկամական շփումներին և տեղական առևտրա-արդյունաբերական պալատների ներկայացուցիչների համագործակցությանը, փոքր և միջին ձեռնարկությունների բիզնես ասոցիացիաներին, քաղաքացիական հասարակության մշակութային, սպորտային և երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը, ինչպես նաև աջակցեն այլ նախաձեռնող խմբերին Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության փոքր քաղաքների զարգացման հարցում:
- 3.5. Երկու Կողմերը պետք է պարբերաբար փոխանակվեն տնտեսական և սոցիալական տեղեկություններով, որպեսզի հետագայում դրանք օգտագործվեն քաղաքների սոցիալ-տնտեսական նախագծերի իրականացման նպատակով՝ ուղղված Աշտարակի և Կիրովսկի զարգացմանը:
- 3.6. Երկկողմ համագործակցության հիմնական նպատակն է քաղաքացիական հասարակությունների ներկայացուցիչների, այդ թվում՝ համայնքային ծառայողների, հասարակական կազմակերպությունների, գործարարների, որոնք ի վիճակի են լուծել փոքր քաղաքների կենսագործունեության խնդիրները, կապերի ամրապնդումը:
- 3.7. Այս փաստաթուղթը չի բխում Կողմերի միջև կնքված այլ պայմանագրային պարտավորություններից և որևէ կողմի վրա չի դնում որևիցե պարտավորվածություն:
- 3.8. Սույն Համաձայնագիրը կնքվում է երեք տարով: Սույն Համաձայնագրի ժամկետը ինքնաբերաբար երկարաձգվում է հետագա եռամյա ժամկետով, եթե Կողմերից մեկը ոչ ուշ, քան երեք ամիս առաջ, մինչև ժամկետի լրանալը, գրավոր չի ծանուցում մյուս Կողմին սույն համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն համաձայնագրի դադարեցումը չի ազդում Կողմերի նախագծերի և ծրագրերի վրա, որոնք համաձայնեցված են սույն համաձայնագրի դրույթների հետ և որոնց իրականացումը ավարտված չէ դրանք դադարեցնելու պահին, եթե Կողմերը գրավոր չհամաձայնվեն այլի մասին:

Ստորագրվել է 09 հունիսի 2013թ.-ին, Լենինգրադի մարզի Կիրովսկ քաղաքում, երկու օրինակից:

Ք. Աշտարակ  


Ք. Կիրովսկ  


Քաղաքապետ՝  
 Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

Քաղաքային միավորման ղեկավար՝  
 Վ. ՆԵԿՐԱՍՈՎ